

1118



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան
«04» 02 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 016 - 25

Ձեռնարկողը՝

«ՄԵՐՈՒՇ ԵՎ ԷԼԵՆ» ՍՊԸ
Արագածոտնի մարզ, Ն. Բազմաբերդ 17 փ., 5 փ.

Գործունեությունը՝

Եղնիկի հանքավայրի Հարավային երկրորդ և երրորդ
փեղամասերում նախափուլային օգտակար հանածոյի
արդյունահանման նպատակով երկրաբանական
ուսումնասիրություն
Արագածոտնի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 016 - 25

«04» փետրվարի 2025թ.

Արագածոտնի մարզի Եղնիկի հանքավայրի Հարավային երկրորդ և երրորդ տեղամասերում նախատեսվող օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝

«ՄԵՐՈՒԺ ԵՎ ԷԼԵՆ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Բ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Եղնիկ բնակավայր

Ներածական մաս. Եղնիկի տուֆերի հանքավայրի Հարավային երկրորդ և երրորդ տեղամասերի տարածքները գտնվում են Թալին խոշորացված համայնքի Եղնիկ բնակավայրի վարչական տարածքում: Եղնիկ բնակավայրի մոտակա շինությունները երկրորդ տեղամասից գտնվում են 310 մ., երրորդից 290 մ., հեռավորությունների վրա: Շղարշիկ բնակավայրի շինությունները համապատասխանաբար 1350 մ. և 1030 մ., իսկ Կաթնաղբյուր բնակավայրի շինությունները՝ համապատասխանաբար 2.0 կմ և 2.7 կմ հեռավորությունների վրա: Հայցվող տարածքի մակերեսը կազմում է 8,3 հա:

Հայցվող տարածքի հողերը ներկայացված են գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով (վարելահողերով, արոտավայրերով):

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Գործունեության իրականացման նպատակն է պարզաբանել տեղամասի տուֆերի համապատասխանությունը «Պատքարեր լեռնային ապարներից: Տեխնիկական պայմաններ» 4001-2013 ԳՈՍՍ-ի, իսկ տուֆերի արդյունահանման թափոնները՝ «Խիճ և ավազ ծակոտկեն լեռնային ապարներից» ԳՈՍՍ 22263-76 պայմանագրերի:



Երկու տեղամասերի կոորդինատներն ըստ ArmWGS-84 համակարգի հետևյալն են.

Հարավային երրորդ տեղամաս

Հ/Հ	Կոորդինատները	
	X	Y
1	4475166	8410892
2	447510	8410851
3	447504	8410825
4	447500	8410792
5	447498	8410763
6	447489	8410707
7	447480	8410710
8	447475	8410696
9	447470	8410663
10	447466	8410637
11	447462	8410557
12	447453	8410510
13	447455	8410436
14	447468	8410506
15	4474744	8410538
16	447482	8410594
17	447487	8410634
18	447492	8410657
19	447503	8410702
20	4475167	8410716
21	4475119	8410720
22	4475135	841080
1	4475166	8410892

Հարավային երրորդ տեղամաս

Հ/	Կոորդինատները	
	X	Y
1	4475346.5	841100
2	4475297.4	841101
3	4475329.7	841107
4	4475420.9	8411066
5	4475438.9	8411054
6	4475415.4	841099
7	4475383.5	8410901
8	4475370.1	841086
9	4475302.9	841088
1	4475346.5	8411007

Հորատման աշխատանքները նախատեսվում է իրականացնել սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թագիկներով, 96 մմ -112 մմ տրամագծերով, ԳԱԶ 66 ՈՒԳԲ -1 ՎՍ տիպի ինքնագնաց հորատող սարքի միջոցով:

Հետախուզվող տեղամասում օգտակար հանածոյի եզրագծման և ըստ խորության ուսումնասիրման համար նախատեսվում է հորատել 14 հորատանցք մինչև 16.0 մ խորությամբ, ընդհանուր 224.0 մ³ ծավալով:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Դրանց ծավալները հետևյալն են ըստ տեսակների.

- հորատահանուկի փաստագրում - 190.0 մ
- փորձնական բացահանքի փաստագրում - 60.0 մ:

Տուֆերի լեռնային զանգվածից պատքարի ելքի տոկոսը որոշելու համար նախատեսվում է մեկական փորձնական բացահանքի անցում յուրաքանչյուր տեղամասում 714 մ³ ծավալով (30.0մ x 7.0մ x 3,4մ), որից 84.0մ³ թարմ չհողմնահարկված տուֆերից: Փորձնական



բացահանքերի ընդհանուր ծավալը կկազմի 1428 մ³:

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից ու բացահանքից: Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 28 հանուկային նմուշ մինչև 5.0 մ երկարությամբ, 2 մենաքար բացահանքից, ինչպես նաև 2 նմուշ պետրոգրաֆիական ուսումնասիրությունների ու 2 նմուշ քիմիական կազմը որոշելու համար:

Վերցված նմուշները կենթարկվեն փորձարկումների, համապատասխան լիցենզավորում ունեցող ընկերության լաբորատորիայում: Ֆիզիկամեխանիկական հատկանիշները կուսումնասիրվեն 30 նմուշներով, քիմիական կազմի վերլուծությունները, պետրոգրաֆիական ուսումնասիրությունները կիրականացվեն 2 նմուշների միջոցով:

Փորձնական բացահանքերի անցման ժամանակ մինչև 0.5 մ հզորությամբ հողաբուսական շերտը (մոտ 210 մ³ ծավալով) նախատեսվում է հեռացնել և ժամանակավորապես կուտակել փորձնական բացահանքի հարակից տարածքում, այնուհետև օգտագործել ռեկուլտիվացիոն աշխատանքների համար:

Ռեկուլտիվացված տարածքի հողային շերտը կպարարտացվի, այնուհետև կկատարվի նաև տարածքին բնորոշ խոտային բուսականության սերմերի ցանք: Հորատման հատոցի տեղակայման վայրերում կկատարվեն փխրեցման և պարարտացման աշխատանքներ:

Վերականգնման ենթակա փորձնական բացահանքերի ընդհանուր մակերեսը կկազմի 420 մ² տարածք: Աշխատանքների կատարման համար կհատկացվի 270,8 հազ.դրամ:

Խմելու և կենցաղային նպատակներով օգտագործվող ջուրը նախատեսվում է գնել մոտակա բնակավայրերի առևտրի կետերից, շշալցված տարբերակով ամեն օր և տեղափոխել տեղամասի տարածք:

Նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում, օգտագործվելու են գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները, որոնք անհրաժեշտության դեպքում կբարեկարգվեն:

Ըստ հաշվետվությունում եղած տեղեկատվության՝ հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն դիտարկվել, պատմության, բնության հուշարձաններ գործունեության իրականացման տարածքում առկա չեն:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Տարածքի աղտոտումը նավթամթերքներով բացառելու նպատակով տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը, յուղերի փոխարինումը, մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է համապատասխան ծառայություն մատուցող մասնագիտական սպասարկման կայաններում:

-Աշխատանքների ժամանակ կիրառվող սարքավորումների և աշխատանքները սպասարկող մեքենաների վրա տեղադրվելու են արտաթորվող թունավոր նյութերի ֆիլտրներ:

-Հորատման մաշված թագիկները հավաքվելու և հանձնվելու են որպես մետաղի ջարդոն, որն իրականացվելու է հորատման ծառայություններ իրականացնող մասնագիտացված ընկերության կողմից:

-Կեղտաջրերը հավաքվելու են հորատից զուգարանում, որը հետագայում դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով:



-Տեղամասում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսական տեսակի հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում են հատուկ միջոցառումներ :

- Բացառվելու է ճանապարհներից դուրս տեխնիկայի տեղաշարժը:

-Փոշենստեցման նպատակով իրականացվելու է ջրցան՝ տեղամասի ճանապարհի երկայնքով և փորձնական բացահանքի սահմաններում:

-Կուտակված թափոնները պարբերաբար տեղափոխվելու են վերամշակում իրականացնող կազմակերպությունների տարածք:

-Կենցաղային աղբը հավաքվելու է հատուկ անթափանց տարողությունների մեջ, տեղափոխվելու է մոտակա աղբավայր՝ համաձայն պայմանագրի:

Աշխատանքների իրականացման ընթացքում ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

-Մթնոլորտային օդի որակի պարբերական մշտադիտարկումներ՝ շաբաթական մեկ անգամ:

-Հողային ծածկույթի մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ:

-Աղմուկի մակարդակի չափումներ՝ տարեկան մեկ անգամ :

-Կենսաբազմազանության ուսումնասիրություն՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակի, աճելավայրերի և ապրելավայրերի տարածքի, պոպուլյացիայի փոփոխության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:

Հայցվող տարածքներում կատարվելիք շրջակա միջավայրի մոնիթորինգի իրականացման համար նախատեսվում է տրամադրել 80.0 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Արագածոտնի մարզի Եղնիկի հանքավայրի Հարավային երկրորդ և երրորդ տեղամասերում նախատեսվող օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային լուսմներ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Եղնիկ բնակավայրում, որոնց ընթացքում մասնակիցները հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն և Արագածոտնի մարզպետարանը: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և բնապահպանական միջոցառումների իրականացման արդյունքում կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները Կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

- Աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ



դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:


-Աշխատանքների իրականացման գործընթացում ներգրավել ազդակիր բնակավայրի բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ՄԵՐՈՒԺ ԵՎ ԷԼԵՆ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Արագածոտնի մարզի Եղնիկի հանքավայրի Հարավային երկրորդ և երրորդ տեղամասերում նախատեսվող օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Գոհար Մինասյան